

զաւորն զանդիտել ի փարթամութենէ Հայոց»։ (Անդ)

Հոս որոշապէս կը տեսնենք, թէ Սարֆրազի տեղ Շահրիմանեան զերդաստանը կը նկատուի զետին ընթացքը արծաթի պարկով կեցնելու դէպքին մէջ։

Այսքանով ալ կ'աւարտին Սարֆրազի մասին ունեցած մեր տեղեկութիւնները։

* * *

Խօջայ Նաղարի երկրորդ որդին, ԷԼԽԱԶ Պէկ, կը մեռնի 1644-ին, «առանց թողլով զյիշատակ ինչ մեծագործութեան», ինչպէս որ կը հաւաստէ Տէր Յովհաննեանց, որմէ առնելով հոս կուտամ իր տապանադիրը։

«Ո՞վ հանդիպողդ այս տապանի,
Աստուածասէր եւ մարդ բարի,
Քանի որ կամքդ է քո ձեռի,
Թող զչարիքն արա բարի։
Կսկիծ էր օրս վախճանի,
Զիմ մեղօքս լամ արտասովալի,
Մեղօք մեռած եւ զաղրալի,
Զիմ չարն էր շատ քան զբարի։
Դառն եւ տխուր տարակուսի,
Թէ ինչ էն իմ դատաստանի,
Այս է տապան էլիազի,
Որդի էր սա մեծ իշխանի,
Որոյ անուն Նաղար կոչի։
Է՞ հանդիպող այս զերեկման,
Պատմեմ ձեզ բան յոյժ է զարման.
Լսել բանին չարադրութեան,
Էն ի խրատ որդւոց մարդկան,
Ի կեանս իւրոյ խիստ էր ցնծման.
Քան վարդ անուշահոտ բուրման,
Թիւն 1093 (1644) էլիազ Բէկն առաւ վախճան»։ (59)

Ինչպէս տեսանք, Ատամ Օլարիուս, 1637 նոյեմբեր 29-ին կը վկայէ, որ էլիազ Բէկ սըրտանց տխուր էր բռնի թլփատուած ըլլալուն համար։ Այդ դէպքէն եօթը տարի վերջ ան կը մեռնի, եւ յայտնի է տապանադրէն, որ իբր քրիստոնեայ կը մեռնի ու կը թաղուի։

Իրմէ 1643-ին ստորագրուած ընծայագիր մը ունինք որ հոս կը ներկայացնեմ իբր ՆԿԱՐ 5։ Յիշեալ ճաշոց — Յայսմաւուրք հատակտոր

(59) «Պատ. Նոր Զուղայու», էջ 92։

ձեռագրիս մէջ կան չորս ուրիշ յիշատակարաններ։ Էջ 53բ. Ա. «Ստացողի գրոցս. Պարոն Վաթանին. եւ կողակցին իւրոյ. որդոցն. Գրիգորին. Նաղարին— դասերացն. Մարիամին. եւ քեռն (այսինքն քրոջը) Մամին. եւ զծոդիս կարգայ»։ Ասիկա կը կրկնուի եւ էջ 58բ. Ա., էջ 67բ. Ա.։ Ասոնց ամէնուն ալ տգեղ եւ նոր զրէ՛ մը աւելցուած է՝ «Աղաղարին»։

Հոս յիշեալ Պարոն Վաթանը Սարֆրազ Պէկի որդին է, որ կը յիշէ երկու որդի՝ Գրիգոր եւ Նաղար՝ ունենալը, ինչպէս նաեւ վերէն աւելցած Աղաղար մը, նոյն ատեն չմոռնալով իր քրոջ անուամբ կոչեալ աղջիկ մը՝ Մարիամ։

Տէր Յովհաննեանց, խօսելով Խօջայ Սարֆրազի որդւոց մասին, կը յիշէ, որ անոր որդին «Խօջայ Վաթանն եւս ծնաւ զերիս որդիս, Սարֆրազ՝ Նաղար եւ Աղաղար անուն»։ (Անդ) Եւ իր ըսածը ապացուցանելու համար, յառաջ կը բերէ 1708 թուականի կալուածոց ցանկ մը։ «Մեծ ամարաթ որ Մէլիք ադէ վարոնինա նստած. մին ամարաթ Խօջայ Վաթանի որդի Սարֆրազնա նստած. զարմաթիմլը, Ղէյնու—նայ իղին, Զուղու միջին Մէյվանն, Զուղայու համամն, Բաղամշիկ ի զին, Գետասէ ի զին եւ երկու բաղարդախն։ Այլեւ Թաւրիզու համամն, բուսխանէն, Լաղենէնց տուն, փոքրիկ տունն որ Աղաղարին վարիոնա նստած, եւ միանջուռն, միանջուռի ջաղացն, եւ բաղի մլքեր որ զուլէրն նստէլան»։ (60)

Նախ՝ չենք զիտեր, թէ ուրկէ՞ առնելով Տէր Յովհաննեանց կը զրէ, թէ Խօջայ Վաթան երեք զաւակ ունեցաւ՝ Սարֆրազ, Նաղար եւ Աղաղար։ Ան չի յիշեր յիշատակարանին մէջ որոշ կերպով յիշուած Գրիգորը եւ դուստր Մարիամը, նոյն ատեն բոլորովին նոր Սարֆրազ մը կը յիշէ։ Ես կը խորհիմ, որ կալուածոց ցանկին մէջ յիշուած Խօջայ Վաթանը գուցէ Սարֆրազ եւ էլիազ Պէկերու եղբայր (Խօջայ Նաղարի որդիք) Խօջայ Վաթանն ըլլայ եւ յիշեալ Սարֆրազն ալ՝ իր որդին։

Սարֆրազ Պէկի Մէլիք Աղայ որդին*) ալ

(60) Անդ՝ էջ 93։

*) Ինք կը ստորագրէ 1672-ին եղած պայմանագրութիւն մը։